

նոյն լերան վրայ յաւերժացնելու համար Փրկչին Համբարձման յիշատակը: Բաց աստի, Յիսուս բնակած էր նոյն տեղւոյն վրայ, վասն զի հոն կը գտնուէր ա՛յն այրը ուր Ան, ըստ ճշմարիտ պատմութեան՝ իր աշակերտները տեղեակ ըրաւ ծածկեալ խորհրդոց: Ըստ Եւսեբիոսի՝ Հեղինէ եկեղեցին շինեց նոյն այրին վրայ, որ ըստ հայ ձեռագրաց կոչուած է Աշակերտսրան և ըստ էթէրիա ուխտաւորուհիին՝ Eleona՝ որուն Յերոնիմոս ալ կը վկայէ իր Ժամանակագրութիւնի մէջ: Այս եկեղեցին կը գտնուէր լերան արեւմտեան կողմը, զառիվարին վրայ, Բեթանիոյ մօտ, գրեթէ այժմու «Հայր մեր»ի եկեղեցւոյն տեղը: Հեղինէի այցելութենէն եօթը տարի վերջ Պորտոյի անանուն ուխտաւորը Երուսաղէմ այցելած էր, և այս եկեղեցիին մասին իր Ուղեգրութեան մէջ շատ վճիտ կերպով կը խօսի. « . . . Երբ Զիթենեաց լեռը ելլէք՝ այն տեղը ուր մեր Տէրը աշակերտները հրահանգեց իր չարչարանքներէն առաջ, հիմնարկուած կը տեսնէք մայր եկեղեցի մը, Կոստանդիանոսի հրամանաւ: Քիչ մը հեռուն կը տեսնուի բլրակ մը ուր մեր Տէրը կը յաճախէր աղօթելու . . . »: Կ'երեւի թէ նոյն ժամանակ տակաւին չէր շինուած Համբարձման եկեղեցին (ըստ հայ ձեռագիրներու՝ Բրի եկեղեցի): Այս վերջինը, Պետրոս վրացի եպիսկոպոսի ասորի կենսագրին համաձայն կառուցուած է Դ. դարու վերջերը՝ Բոմբիա անուն նշանաւոր ծագումով, հարուստ և բարեպաշտօն հոովմայեցի տիկնոջ մը կողմէ. «Ան կը սիրէր բնակիլ Սուրբ Տեղեաց մէջ. անոր հետեւած են մեծ և փոքր ազնււագոյի Մելանիա անուն բարեպաշտ երկու տիկիները: Բոմբիա շինած է Զիթենեաց լերան Համբարձման եկեղեցին և յարակից շէնքերը»: Նոյն կենսագրին մէկ